

L.U. HAYRAPETYAN

PHRASEOLOGICAL NEOLOGISMS IN HRANT MATEVOSYAN'S
COLLECTION OF STORIES "THE TREES"

The phraseological neologisms (phraseological units, phraseological expressions), in the collection of stories "The Trees" by Hrant Matevosyan coined on the basis of phraseological expressions used in spoken and literary languages by the principle of analogy, antonymy and synonymy are analyzed.

Keywords: idiom, neologism, spoken language, dialect, literary style, phraseological synonym, phraseological antonym, phraseological analog.

ՀՏԴ 811.19'161.1'111:159.922.2

Հ.Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ, ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ
ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ,
ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Դիտարկվում է բնության երևույթ և առարկա անվանող բաղադրիչներով դարձվածալին միավորների ծագման աղբյուրների բազմազանությունը հայերենում, ռուսերենում և անգլերենում: Ներկայացված են տվյալ լեզվին հատուկ դարձվածքներ, փոխառված, թարգմանված և հեղինակային ծագում ունեցող դարձվածային միավորներ, որոնք վկայում են տարբեր ժողովուրդների աշխարհընկալման և լեզվամտածողության յուրահատկությունների մասին:

Առանցքային բառեր. դարձվածային միավոր, դարձվածքի ծագում, սկզբնաղբյուր, մշակութային արժեք, իմաստային համարժեքություն, ազգային յուրահատկություն:

Ներածություն: Մտածողության և կենսափորձի զարգացման հետ մարդը բառերին նոր իմաստներ է տվել ու իր մտքերն ավելի արտահայտիչ, տպավորիչ դարձնելու նպատակով կազմել է այնպիսի բառազուգորդումներ, որոնց բաղադրիչները հանդես են գալիս փոխաբերական իմաստներով, և բառակապակցությունը ձեռք է բերում նոր իմաստ: Վերաիմաստավորված բառակապակցությունը՝ դարձվածքը, կիրառվում է մարդուն, առարկաներն ու իրավիճակը բնութագրելու, խոսքի ուժն ազդեցիկ և պատկերավոր դարձնելու նպատակով: Դարձվածքների առաջացումը կապված է արտաքին աշխարհի առարկաների ու երևույթների ընկալման հետ, և զարմանալի չէ, որ տարբեր ժողովուրդներ համանման երևույթների վերաբերյալ տարբեր դարձվածքներ են կազմել, որոնցում արտացոլվում են տվյալ ժողովրդի կյանքն ու մշակույթը, պատմությունը, բնակլիմայական և կենցաղային պայմանները, հոգեբանությունը, ազգային ինքնատիպությունն ու ժողովրդի մտածողության յուրահատկությունը:

Դարձվածքների ծագումը: Դարձվածքների աղբյուր կարող են լինել բանա-
 հյուսությունը, ազգային ավանդությունները, հավատալիքները, սովորություններն
 ու ժողովրդական մեկնաբանությունները: Դարձվածքների առաջացմանն ու հարս-
 տացմանը նպաստում են նաև բարբառները, հեղինակային նորաբանությունները,
 փոխառությունները, թարգմանական գրականությունը, պատճենումները: Այլ լեզու-
 ներից թարգմանության և պատճենման միջոցով հայերենին են անցել *անհայտ*
երկիր-terra incognita – *չբացահայտված հանգամանք (լափիններենից)*, *երկու կրակի*
արանքում – *между двух огней (ռուսերենից)*, *գրոհ և փոթորիկ* – *Sturm und Drang*
(գերմաներենից) դարձվածքները: Կան նաև հեղինակային ծագում ունեցող մի շարք
 դարձվածքներ, որոնք հանդիպում են դիտարկվող երեք լեզուներում՝ *փոթորիկ մի*
բաժակ ջրում – *буря в стакане воды* – *a storm in a tea-cup* – *անիմաստ հուզում*
(Մոնտեսքյո), *կրակի վրա յուղ լցնել* – *подливать масла в огонь* – *add/pour oil on*
the fire – *հրահրել (Հորացիոս)*, *որոտ պարզ երկնքում* – *гром среди ясного неба* – *a*
bolt out of the clear sky – *անակնկալ խոշոր ցնցում, հանկարծակի, անսպասելի*
(Հորացիոս), *կրակից շագանակներ հանել* – *тащить каштаны из огня* – *pull*
chestnuts out of the fire – *դժվար գործ անել ուրիշի միջոցով (Լաֆոնտեն)*, *պղտոր*
ջրում ձուկ որսալ – *ловить рыбу в мутной воде* – *to fish in troubled waters* – *խառը*
իրադրությունից օգուտ քաղել (Եզոպոս) և այլն: Աստվածաշնչից տարբեր լեզու-
 ների՝ ինչպես նաև հայերենին են անցել *երկնային մանանա* – *манна небесная* –
manna from heaven – *առանց ջանք գործադրելու եկած բարիք, խիստ ցանկալի*
բան, ըստ առասպելի՝ հրեաների համար իջած սնունդը նրանց՝ անապատներում
թափառումների ժամանակ, ավերյաց երկիր – *земля обетовенная* – *the promised*
land – *ըղձալի, երագելի աշխարհ, քամի ցանոդը փոթորիկ կինձի* – *посеять ветер*
и пожать бурю – *sow the wind and reap the whirlwind* – *չարիք գործողին ավելի*
վատ հարուցում է սպասվում դարձվածքները: Շատ դարձվածքներ տարբեր
 լեզուներում առաջացել են արտաքին աշխարհի տարբեր երևույթների միանման
 ընկալման արդյունքում, պայմանավորված մարդկային մտածելակերպի ընդհան-
 րություններով՝ *մաղով ջուր կրել* – *носить воду решетом* – *draw/carry water in a*
sieve – *իզուր աշխատանք կատարել, գլխին սառը ջուր լցնել* – *облуть холодной*
водой – *pour cold water on* – *ոգևորությունը սառեցնել, հույսերը ի դերև հանել, հոդս*
ցնդել – *взлетать навоздух* – *to vanish into the thin air* – *անհետանալ, ցիրուցան*
լինել, յոթերորդ երկնքում լինել – *быть на седьмом небе* – *to be in the seventh*
heaven – *երջանիկ լինել:* Մի բանի անհնարինությունը նշելու համար ժողովուրդը
 ներկայացնում է անհնարին գործողություն՝ *եղանով ջրի վրա գրել* – *вилами по воде*
писано – *written in water*, վտանգավոր իրավիճակը՝ *երկու կրակի/քարի արանքում*
– между двух огней – *between two fires, between the devil and the deep blue sea*,
կրակի հետ խաղալ – *играть с огнем* – *to play with fire*, *հրով ու սրով* – *огнем и*
мечом – *with fire and sword* – *դաժանաբար դարձվածքներով:* Գուցե կենդանական

աշխարհի դիտումների արդյունքում են առաջացել *ջրից չոր դուրս գալ* – *вы́нсу сыхум из воды* – *փորձանքից անվնաս ազատվել*, *как с гуся вода* – *like water of a duck's back* – *հեշտությամբ անհետացող* դարձվածքները: Բազմաթիվ դարձվածալին միավորներ առաջացել են ժողովրդական հավատալիքներից: Ժամանակի հետ մարդը իր հավատալիքները կապել է Արևի, Լուսնի և մյուս լուսատուների հետ, որոնց մեջ արևն էր ամենագորեղը, իր ջերմությամբ և լույսով կենարարն ու հզորը: Հայաստանի հին բնակիչները սպասելիքներով և հույսերով կապված են եղել արևի հետ, երկրպագել և զոհեր են մատուցել նրան [1]: Այս հանգամանքով պայմանավորված հայերենում ավելի շատ դարձվածքներ են կազմվել *արև* բաղադրիչով, ուսերենում հնարավոր է, որ *солнце* բաղադրիչով դարձվածքների սակավությունը պայմանավորված է տվյալ տարածաշրջանում արևային օրերի պակասով: Անգլերենում *sun* բաղադրիչով դարձվածքները (*with/against the sun, shoot/take the sun*) կապված են ծովագնացության հետ, քանի որ Անգլիան ծովային երկիր է, որտեղ զարգացած է նավագնացությունը, և ավելի կարևորվում են արևի լույսն ու բարձրությունը, քան նրա պարզևած բերքն ու բարիքը՝ ի տարբերություն հայերի, որոնք բնության կենարար ուժը, բերքատվությունը, մարդու ապահովությունն ու նյութական բարիքը կապել են արևի հետ: Ջուրը, արևը, երկիրը, հողը՝ տարերքի այդ հզոր տարրերը, կենդանական ու բուսական աշխարհի կենաց, հարատևման, պտղաբերման ու նորոգման զորեղ գործոններ ու կենսատու ուժեր էին, որոնցով պայմանավորված էր մարդու գոյությունը, բարօրությունը [2]: Երեք լեզուների լեզվակիրների հավատալիքներում *լուսինը* համարվել է առողջաբեր, երջանկաբեր, լուսնի որոշ օրեր՝ հաջողակ, մյուսները՝ ձախորդ: Այդուհանդերձ, անգլերենում *moon* բաղադրիչով ավելի շատ դարձվածքներ են կազմվել, գուցե այն ավելի է կարևորվել՝ կապված նավագնացության, լուսնի ծննդյան ու կյանքի փուլերի, դրանցով պայմանավորված մակընթացության և տեղատվության հետ, որոնք էական նշանակություն ունեն ծովային գործում: Հին ժողովրդական հավատալիքներում ամեն մարդ մի աստղ ունի, որը խավարում է, երբ մարդ վտանգի մեջ է ընկնում: Ճակատագրի հավատքը կապվում է աստղագարդ երկնքի հետ, աստղերի մի մասը բարի է, մյուսը՝ չար: Այն աստղը, որի տակ ծնվում է մարդը, նրա բախտն է, և եթե նրա աստղը բարի է, նա բախտավոր է, եթե չար է, անբախտ [3]: Դիտարկվող երեք լեզուներում էլ հանդիպում են հավատալիքներից սերող դարձվածքներ, քանի որ նույն հավատալիքն ունեցել են տարբեր ժողովուրդներ՝ *բախտավոր աստղի տակ ծնվել* – *родиться под счастливою звездой* – *be born under a lucky star* – *հաջողակ լինել*: Բնության տարրերից հայերի մոտ պաշտամունքի առարկաներ են եղել կրակը, ջուրը: Կրակը համարվել է սուրբ, չարահալած, երդվել են կրակով, այն հետագայում կապվել է տան, ընտանիքի, օջախի պաշտամունքին, իսկ ջրի պաշտամունքի հետքերը պահպանվել են ջրակունքների մոտ կանգնեցված քարակոթողներում և «կաթնաղբյուրներին» մատուցվող զոհաբերության և պաշտամունքի արարողությամբ:

յուններում [4]: Հայկական մշակույթում ջրի պաշտամունքի հետքերը առկա են նաև մեր էպոսում: Էպոսի հերոսները իրենց տունը կառուցել են զորեղ առվի ակունքին, ջրից են ստացել զենքն ու զրահը, Քուռկիկ Զալալին, ջրից էին հզորանում Դավիթը, Միերը: Հին հավատքով ջուրը տալիս է ողջություն, առողջություն, երկար կյանք, մինչև իսկ անմահություն՝ *անմահական ջուր* – *живая вода* – *water of life* – *հրաշագործ հատկություն ունեցող ջուր*, որ մեռածին կենդանացնում և հիվանդին առողջացնում է, մաքուր, սառնորակ ջուր: Ռուսական մշակույթում ջուրն առաջացել է կախարդական աղբյուրից և տարածվել աշխարհով մեկ, համարվել է մաքրության, ճշմարտության, առողջության, կենսական ուժի խորհրդանիշ: Ջրով գուշակում էին մարդկանց ճակատագիրը, բուժում ու կյանք էին պարգևում: Ռուսական մտածողության վկայությունն են կրում ավանդույթների և սովորույթների հետքերը պարունակող հետևյալ դարձվածքները՝ *как в воду глядел* – *կանխագուշակել ջրով /հին ժամանակներում ամանով ջրի մեջ նայելով գուշակություններ էին անում, ապագան գուշակում էին մաքուր ջրով կուժի մեջ նայելով/*, *седьмая вода на киселе* – *հեռավոր ազգական /ռուսական գյուղերում վարսակի այլուրից կիսել էին եփում, օգտագործելուց հետո օսլայի նստվածքի վրա ջուր էին ավելացնում, այսպես մի քանի անգամ /7, 10 անգամ/, վերջում արդեն կիսելը կորցնում էր իր ֆիզիկական և համային հատկանիշները և քիչ էր հիշեցնում նախնական վիճակը/*, *прятать концы в воду* – *հեղքերը թաքցնել /ծովային գործի և նավագնացության հետ կապված սովորույթ է, երբ հեռացող նավի պարանները կտրում և ծովն էին նետում/*:

Որոշ համարժեք դարձվածքների առաջացման մասին դժվար է հետևություններ անել՝ արդյո՞ք դրանք առաջացել են ինքնուրույնաբար, փոխառվել են, թարգմանվել, թե՞ ստեղծվել են գոյություն ունեցող դարձվածքների նմանությամբ՝ մշակութային շփումների ընթացքում: Հաճախ առաձևերից, զրույցներից, ասացվածքներից ու հեքիաթներից առանձին հասկացություններ ընդհանրական նշանակություն են ստացել, անցել են կենդանի խոսքի մեջ և վերածվել դարձվածքների: Եվ քանի որ դրանք ձևավորվում են երկարատև դիտարկումների արդյունքում՝ ներկայացնելով լեզվակիր ժողովրդի աշխարհընկալումն ու լեզվամտածողությունը, այսինքն՝ տարբեր ժողովուրդներ որոշակի երևույթներ տարբեր կերպ են ընկալել, մշակել ըստ իրենց մտածողության և մեկնաբանել յուրովի, ուստի որոշ դարձվածքներ հատուկ են միայն մեկ լեզվի և ունեն ազգային բնույթ: Օրինակ՝ հայերենում՝ *լուսնյակին/արևին ասում է՝ դու մի դուրս գա, ես հերիք եմ* – *շապ գեղեցիկ, ջուրն ընկնողը անձրևից չի վախենա* – *մեծ վրանգի մեջ եղողը փոքր բանից չի վախենա, քամու բերածը քամին էլ կտանի* – *պատահաբար ձեռք բերածը հեշտությամբ էլ ձեռքից կգնա*, ռուսերենում՝ *за труды дается земля* – *շապ հեռու, հանդիպում է ռուսական ժողովրդական հեքիաթներում /հաշվում էին ոչ թե տասնյակներով, այլ իններով՝ 3 անգամ 9/, едет на три аршина в землю* – *խորաթափանց լինել, տեսնել անգամ այն, ինչ հնարավոր չէ /մեկ արշինը հավասար է 0.7 մետրի/, անգ-*

լերենում *jump over the moon* – ուրախությունից ցատկել, աշխարհով մեկ լինել, մանկական հանգավորված երգից ծագող դարձվածք է, *aim at the moon* – փառասեր լինել, ծագում է 17-րդ դարի քահանա Ջորջ Հերբերտի գրի առած ասացվածքներից, *believe the moon is made of cheese* – բացահայտ անհեթեթության հավատալ, սկզբնաղբյուրը 17-րդ դարում Ջոն Հեյվուդի ներկայացրած պատմվածքն է գայլի ու աղվեսի մասին, *hitch one's wagon to the moon* – ձգվել ամենաբարձրին, սկզբնաղբյուրը 1862 թ-ին Ռալֆ Վալդո Էմերսոնի գրած «Ամերիկյան քաղաքակրթություն» ակնարկն է, որտեղ դարձվածքը գործածվել է առաջին անգամ, *a pie in the sky* – անիրականանալի ցանկություն, երազանք, ծագման աղբյուրը 20-րդ դարասկզբում ստրուկների նկատմամբ քահանայի վերաբերմունքը քննադատող աշխատանքի կազմակերպիչ Ջո Հիլի գրած «Քարոզիչը և ստրուկը» երգն է, որում նա մեղադրում էր քահանային՝ երկնքում ավելի լավ կյանք ունենալու սուր խոստումներ տալու համար, քանի որ մարդիկ երկրի վրա սովամահ էին լինում, իսկ նա հավաստիացնում էր, թե ավելի լավ կապրեն մահից հետո՝ *You will eat by and by in that glorious land above the sky, work and pray, live on hay, you'll get a pie in the sky when you die; That's a lie*. Առաջանալով ազգային հիմքի վրա՝ նշված բաղադրիչներով դարձվածքներն արտացոլում են տվյալ ժողովրդի կյանքի դրվածքը, հասարակական և բարոյական արժեքների համակարգը, երկրի պատմական զարգացման ընթացքն ու տվյալ ժամանակաշրջանի իրական պատկերը:

Եզրակացություն: Տարբեր սկզբնաղբյուրներից առաջացած բնության երևույթի, առարկայի անվանում պարունակող դարձվածային միավորները հայերենում, ռուսերենում և անգլերենում ներկայացնում են ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքը, վերարտադրում են անցյալը, նկարագրում կենցաղն ու բարքերը, ծանոթացնում սովորույթներին, ավանդույթներին, հավատալիքներին, արտացոլում տարբեր լեզվակիրների աշխարհընկալումը, լեզվամտածողությունը, ժամանակի գաղափարախոսությունը, հասարակական վարքագծի չափանիշները, լուսաբանում ազգային և լեզվամշակութային յուրահատկությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Մնացականյան Հ.** Արևապաշտության հետքերը Հայաստանում ըստ բրոնզե պեղածո իրերի / Առանձնատիպ պետական պատմական թանգարանի «Աշխատությունների» հատոր 1-ից.-Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1948, էջ 67-95:
2. **Իսրայելյան Հ.** Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում /ըստ հնագիտական նյութերի/.-Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973.-172 էջ:
3. **Աբեղյան Մ.** Երկեր.- հատոր Է.-Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975.-603 էջ:
4. **Հարությունյան Ս.** Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը.- Ե., Մուղնի հրատ., 2001.-57 էջ:

А.Г. ПЕТРОСЯН

**ИЗУЧЕНИЕ ИСТОЧНИКОВ ПРОИСХОЖДЕНИЯ ФРАЗЕОЛОГИЗМОВ,
ВКЛЮЧАЮЩИХ НАИМЕНОВАНИЯ ЯВЛЕНИЙ И ОБЪЕКТОВ
ПРИРОДЫ В АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ**

Рассматриваются источники происхождения фразеологических единиц, обозначающих компоненты явлений и объектов природы в армянском, русском и английском языках. Представлены фразеологизмы, свойственные данному языку, а также заимствованные, переведенные и авторские фразеологизмы, которые свидетельствуют об особенностях восприятия мира и языковом мышлении разных народов.

Ключевые слова: фразеологическая единица, происхождение, источники, культурное значение, семантическая эквивалентность, национальная особенность.

H.G. PETROSYAN

**ORIGIN AND SOURCES OF PHRASEOLOGICAL UNITS WITH
COMPONENTS NAMING NATURE PHENOMENA AND OBJECTS IN
ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH**

The variety of sources and origin of the phraseological units with the components naming nature phenomena and objects in Armenian, Russian and English have been considered. The phraseological units characteristic to the given language, borrowed, translated, and also units created by different authors have been introduced which witness about the peculiarities of world perception and verbal thinking of different peoples.

Keywords: phraseological unit, origin, sources, cultural value, semantic equivalence, national peculiarities.

УДК 81'364.2

С.С. МАРТИРОСЯН

**О ВОПРОСАХ ФРАЗЕОЛОГИИ РУССКОГО ЯЗЫКА И НЕКОТОРЫХ
МЕТОДАХ ЕЕ ОБУЧЕНИЯ**

Рассматривается вопрос необходимости изучения фразеологии в процессе обучения русскому языку как неродному. Анализируются причины трудного восприятия фразеологических единиц. Изучаются некоторые методы обучения вопросам усвоения и практического применения фразеологизмов в армянской аудитории.

Ключевые слова: фразеология, фразеологическая единица, навыки, практическое применение, эквивалент, смысловое единство.

Изучение любого языка предполагает непременно знакомство с различными языковыми оформлениями, в первую очередь, с его фразеологией. Чем богаче и оригинальнее способы ее самовыражения, тем богаче и самобытнее язык данного народа.